

Ընդհանուր ցուցումներ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծակքար համայնքի մանկապարտեզի ներքին և ներտարածքային ջրամատակարարման և կոյուղու աշխատանքային նախագիծը իրականացվել է համաձայն նախագծման առաջադրանքի, ճարտարապետա-շինարարական գծագրերի, գլխավոր հատակագծի, տեխնիկական պայմանների և ՀՀ տարածքում գործող շին.նորմերի և կանոնների: Նախագծով նախագծված են ներքին և ներտարածքային Ջ և Կ հետևյալ համակարգերը՝

Ներքին ցանցեր

1. Խմելու-տնտեսական ջրամատակարարում (B1)
2. Տաք ջրամատակարարում (T3)
3. Կենցաղային կոյուղի (Կ1)

Ներտարածքային ցանցեր

- I Խմելու-տնտեսական ջրամատակարարում (B1)
- II. Կենցաղային կոյուղի (K1)

1. Խմելու-տնտեսական ջրամատակարարում (B1)

Համակարգը նախատեսված է մանկապարտեզի խմելու-տնտեսական կարիքների համար: Ջրամատակարարումը իրականացվում է նախագծվող ներտարածքային ջրագծի ցանցից $d=48 \times 3$ մմ պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներով (մուտքագծեր): Ընդունված է մեկ մուտքագծով փակուղային համակարգ: Համապատասխան ճնշում ապահովելու համար 1-ին հարկի տնտեսական սենյակում նախատեսված է տեղադրել պոմպային ագրեգատ՝ $CPm \ 130 \ H=14 \text{մ} , \ Q=80 \text{լ/րոպ}, \ N=0.37 \text{կվտ}$ հզորությամբ (մեկ պոմպային ագրեգատ էլ պահվում է պահեստում): Ներքին ցանցը մոնտաժվում է $d=40-32$ մմ պողպատե և $d=32-20$ մմ պոլիպրոպիլենային խողովակներով և ձևավոր մասերով: Բոլոր անհրաժեշտ տեղերում նախատեսվում է փակող արմատուրա: Սանհանգույցներում և խոհանոցներում խողովակները ցանկալի է մոնտաժել հախճասալերի տակ:

2. Տաք ջրամատակարարում (T3)

Համակարգը նախատեսված է մանկապարտեզի խոհանոցակոնքերի և ցնցուղարանների տաք ջրամատակարարման համար , որը իրականացվում է մանկապարտեզում տեղադրված ջեռուցման կաթսաների և բուֆետներում տեղադրված էլեկտրական ջրատաքացուցիչների միջոցով : Ընդունված են $d=20$ մմ պոլիպրոպիլենային խողովակներ և ձևավոր մասեր: Անհրաժեշտ տեղերում նախատեսված է փակող արմատուրա:

3. Կենցաղային կոյուղի (K1)

Համակարգը նախատեսված է մանկապարտեզի սան. տեխնիկական սարքերից, խոհանոցակոնքերից և հոսակներից կենցաղային կեղտաջրերի հեռացման համար: Կեղտաջրերի հեռացումը կատարվում է ինքնահոս , կոյուղու 3 թողարկներով (K1-1, K1-2 , K1-3) : Կեղտաջրերը հեռացվում են ներտարածքային կոյուղու ցանցի դիտահորեր : Ներքին ցանցում ընդունված են կոյուղու պլաստմասե $\Phi 100 - 50$ մմ խողովակներ և պլաստմասե ձևավոր մասեր:

Ներտարածքային ցանցեր

1. Խմելու-տնտեսական ջրամատակարարում (B1)

Համակարգը նախատեսված է մանկապարտեզի ջրամատակարարման կարիքների համար: Ջրամատակարարումը իրականացվում է տարածքով անցնող $D100$ մմ պողպատե ջրագծից, համաձայն տեխնիկական պայմանի $d=48 \times 3$ մմ պողպատե էլ. եռակցվող խողովակներով, որոնք ենթարկվում են հակակոռոզիոն մեկուսացման երկշերտ կաշուն ժապավենով: Սահմանազատման կետում (մանկապարտեզի տարածքում) նախատեսված է ջրաչափական հոր $720 \times 720 \times 600$ (h)՝ ջրաչափական հանգույցով ($D=40$ մմ ջրաչափ, $D40$ մմ ֆիլտր և $D40$ մմ փական): Գործող ջրագծի վրա նախատեսված է տեղադրել ջրամատակարարման կլոր հոր՝ $D=1500$ մմ, $H=1500$ մմ ե/բ հավաքովի էլեմենտներից, հակահրդեհային հիդրանտի տեղադրման համար:

2. Կենցաղային կոյուղի (K1)

Համակարգը

նախատեսված է մանկապարտեզի կեղտաջրերը ներտարածքային ցանցով հեռացման համար: Կեղտաջրերը ինքնահոս հեռացվում և լցվում են նախագծվող կեղտաջրերի կուտակման հոր ($V=50$ խմ): Ներտարածքային ցանցում նախատեսված են կոյուղու պոլիէթիլենե բարձր խտության գոֆրոխողովակներ $\Phi 150 - 200$ մմ: Բոլոր անհրաժեշտ տեղերում նախատեսված են կոյուղու դիտահորեր: Հորերը կլոր կտրվածքի են, պոլիմեր - ավազային էլեմենտներից՝ միաձույլ բետոնե առվակով :

Մանկապարտեզում գոյություն ունեցող սան.-տեխնիկական սարքերը և խողովակները ապամոնտաժվում են և փոխարինվում նորով:

Հողային աշխատանքները և միացումները գոյություն ունեցող ցանցերին կատարել համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայությամբ: